ПРОЛЕТАРИИ ВСЕХ СТРАН, СОЕДИНЯЙТЕСЬ!
ПРОЛЕТАРЫ ВСЕХ СТРАН, СДИНАЙТЕСЬ!
ПРОЛЕТАРЫ УСІХ КРАЇН, ЄДНАЙТЕСЯ!
VISU ŠALIŅ PROLETARAI, VIENYKITĖS!
KÕIGI MAADE PROLETAARLASED, ÜHINEGE!

60

ՍՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՆԾԱԼԻ ՀՈԲԵԼՅԱՆԸ

ԳԵՎՈՐԳ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

Սովետական ժողովուրդը, աշխարհի առաջադեմ մարդիկ մեծ հանդիսավորությամբ նշում են Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման 60-ամյակը։ Սովետական բազմազգ պետության ստեղծումն ու զարգացումը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի արդյունքն է, պրոլետարական ինտերնացիոնալիզմի մարքսիստական-լենինյան սկզբունքների, ՍՄԿԿ-ի լենինյան ազգային քաղաքականության հաղթանակը։ ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Գերագույն սովետի և ՌՍՖՍՀ Գերագույն սովետի՝ ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակին նվիրված համատեղ հանդիսավոր նիստում արտասանած զեկուցման մեջ ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընկ. Յու. Վ. Անդրոպովը ասաց. ՍՍՀՄ «կազմավորումը եղավ ոչ միայն խոշոր քայլ սոցիալիզմի զարգացման գործում, այլև համաշխարհային պատմության ընթացքի կարևորագույն բեկումնային պահերից մեկը»[1]։

Մարդկության պատմության ընթացքում բազմազգ պետությունների ստեղծման քիչ փորձեր չեն եղել։ Սակայն բոլոր այդ պետությունները, հիմնված լինելով ուրիշ ժողովուրդների շահագործման, ազգերի անիրավահավասարության վրա, վերջիվերջո փլուզվում էին և կործանվում։ Մինչդեռ սովետական սոցիալիստական բազմազգ պետությունը, որը ստեղծվեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի, լենինյան ազգային քաղաքականության հետևողական կենսագործման շնորհիվ, ահա վեց տասնամյակ է ինչ, ամրապնդվելով ու հզորանալով, դարձել է ջահ ու օրինակ՝ աշխարհի բոլոր ազատատենչ ժողովուրդների համար։ «ՍՍՀՄ վաթսունամյակը նշանակալի իրադարձություն է սովետական ժողովրդի կյանքում,— ասված է Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման 60-րդ տարեդարձի մասին ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ,— ՍՄԿԿ-ի լենինյան ազգային քաղաքականության հաղթանակի, սոցիալիզմի պատմական նվաճումների վկայությունը։ Այդ փառապանծ տարեդարձին Սովետական Միությունը ամբողջ աշխարհի առջև կանգնում է որպես համատեղ կոմունիզմ կառուցող իրավահավասար հանրապետությունների համերաշխ ընտանիք»[2]։ ՍՍՀՄ-ը բազմազգ պետության նոր, սոցիալիստական տիպ է, որն իր մեջ մարմնավորում է ազգային-պետական շինարարության պրոլետարական, սոցիալիստական ինտերնացիոնալիզմի սկզբունքները։ ՍՍՀՄ կազմավորումն ու ամրապնդումը սոցիալիստական ազգերի ծաղկման ու մերձեցման կարևոր գործոն է։

Սովետական բազմազգ պետության տեսական հիմունքները գիտականորեն մշակել և դրանց կիրառումը ղեկավարել է բոլշևիկյան կուսակցության հիմնադիր և առաջնորդ Վ. Ի. Լենինը։ Ազգային հարցի տեսական ու գործնական լուծումը լենինյան հանճարի վիթխարի ծառայությունն է։

1901—1903 թվականներին «Իսկրայի» էջերում Վ. Ի. Լենինը հիմնավորում է ազգային հարցում ինքնորոշման իրավունքի մասին մարքսիստական

---

1 «Սովետական Հայաստան», 22. XII. 1982 (№ 292)։

2 «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման 60-րդ տարեդարձ։ ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը», Երևան, 1982, էջ 3։

դրույթը։ 1903 թ. փետրվարին թերթում տպագրված «Հայ սոցիալ-դեմոկրատների Միության մանիֆեստի մասին» հոդվածում Վ. Ի. Լենինը գրում էր. «Պրոլետարիատի գործն է ավելի սերտորեն համախմբել բոլոր և ամեն տեսակ ազգությունների բանվորների, որքան կարելի է ավելի լայն զանգվածներին, համախմբել՝ հնարավորին չափ լայն ասպարեզում պայքարելու համար հանուն դեմոկրատական հանրապետության և հանուն սոցիալիզմի»[3]։ Վ. Ի. Լենինը ռուս բանվորի պատվի գործն էր համարում հանդես գալ ամեն տեսակի ազգային ճնշման դեմ, որովհետև դա ամենից լավ կամրացներ Ռուսաստանի բոլոր բանվորների՝ առանց ազգությունների խստության լիակատար միասնությունը։

«Քննադատական դիտողություններ ազգային հարցի վերաբերյալ» աշխատության մեջ, որը տպագրվել է 1913 թ., Վ. Ի. Լենինը ընդգծել է. «Մարքսիստ չէ նա, անգամ դեմոկրատ չէ նա, ով չի ընդունում և չի պաշտպանում ազգերի ու լեզուների իրավահավասարությունը, ով չի պայքարում ամեն մի ազգային ճնշման կամ անիրավահավասարության դեմ»[4]։ Վ. Ի. Լենինը գիտականորեն հիմնավորեց, որ կապիտալիզմի օրոք հնարավոր չէ ազգային ճնշման վերացումը, և որ դա հնարավոր կլինի միայն սոցիալիստական հեղափոխության հաղթանակի շնորհիվ։ Բանվոր դասակարգի ու գյուղացիության, բանվոր դասակարգի և ճնշված ազգությունների դաշինք՝ պրոլետարիատի դիկտատուրայի մասին — ահա լենինիզմի անկյունաքարը։

Ռուսաստանի և մյուս բոլոր երկրների բանվոր դասակարգի ու աշխատավորության ազատագրական պայքարի փորձը լիովին հաստատեց ազգային հարցում լենինյան սկզբունքների ճշմարտացիությունը։

Ազգային հարցում կոմունիստական կուսակցության լենինյան ծրագիրը մոբիլիզացրեց հեղափոխական բոլոր ուժերին, ճնշված ու շահագործվող ժողովուրդներին դինեց իրենց ազատագրական շարժման նկատմամբ հաղթանակի հավատով, պրոլետարիատին և գյուղացիությունը դաստիարակեց պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով, համախմբեց Ռուսաստանի բոլոր ազգերի, այդ թվում և հայ աշխատավորությանը՝ ցարիզմի ու կապիտալիզմի դեմ մղվող պայքարում։ Այդ մեծ պայքարն էլ Վ. Ի. Լենինի ղեկավարած կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ 1917 թ. հոկտեմբերին Ռուսաստանի աշխատավորությանը հասցրեց պատմական հաղթանակի։ Հոկտեմբերի հաղթարշավը ազատություն բերեց նաև նախկին ռուսաստանյան կայսրության կազմում գտնված ժողովուրդներին, որոնք, ապստամբելով իրենց երկրների բուրժուազգայնական կառավարությունների դեմ, հաստատեցին սովետական կարգեր։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո Վ. Ի. Լենինը բազմակողմանիորեն զարգացրեց մինչև հեղափոխությունն արտահայտած իր այն գաղափարը, որ բազմազգ երկրում իշխանությունը բանվոր դասակարգի ձեռքն անցնելուց հետո հնարավոր է միութենական ֆեդերատիվ հանրապետություն ստեղծել։

Նախկին ցարական Ռուսաստանի ժողովուրդների կողմից հեղափոխության շնորհիվ ստեղծված սովետական բոլոր հանրապետություններին հատուկ էր ֆեդերատիվ միավորման բնական ձգտումը, և նրանք ավելի ու ավելի սերտորեն էին համախմբվում ՌՍՖՍՀ շուրջը, որը Սովետական Միության յուրահատուկ նախատիպն էր և օրինակ ֆեդերատիվ միավորումների համար։

1918 թ. հունվարի սկզբին գրած «Աշխատավոր ու շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիայում» Վ. Ի. Լենինը նշում էր, որ, հաստատելով հասարակության սոցիալիստական վերակառուցման արմատական հիմունքները, իրենք ձգտում են «ստեղծել Ռուսաստանի բոլոր ազգերի աշ-

3 Վ. Ի. Լենին, երկ, հ. 7, էջ 132։
4 Վ. Ի. Լենին, երկ, հ. 24, էջ 157։

խատավոր դասակարգերի իսկապես ազատ ու կամավոր, հետևաբար և է՛լ ավելի սերտ ու հաստատուն միությունն»[5]։ Նույն փաստաթղթում նա գրում էր, որ Ռուսաստանի սովետական կառավարությունների ֆեդերացիայի հիմնական սկզբունքները որոշելով, պետք է թողնել, որ յուրաքանչյուր ազգի բանվորներն ու գյուղացիները իրենց սեփական լիակատար սովետական համագումարում ինքնուրույնաբար վճռեն, թե կամենո՞ւմ են, արդյոք, և ի՞նչ հիմունքներով մասնակցել ֆեդերալ կառավարությանը և մյուս ֆեդերալ սովետական հիմնարկություններին[6]։

1919 թ. հունիսին գրած «Մեծ նախաձեռնություն» հոդվածում Վ. Ի. Լենինը նշում էր, որ սովետական հասարակարգում միլիոնավոր մարդիկ «սկզբում միավորվում են մեկ սոցիալիստական պետության մեջ, հետո Սովետական Հանրապետությունների Միության մեջ»[7]։

Քաղաքացիական պատերազմի և օտարերկրյա ռազմական ինտերվենցիայի տարիներին ընդհանուր թշնամու դեմ մղված պայքարում սովետական հանրապետությունների համագործակցությունը ռազմաքաղաքական դաշինքի ձև ընդունեց։ Խաղաղ շինարարության անցումն է՛լ ավելի սուր դրեց այնպիսի պետական դաշինքի ստեղծման հարցը, որը հնարավորություն կտար միավորելու բոլոր հանրապետությունների նյութական ռեսուրսները՝ ժողովրդական տնտեսության զարգացումն արագացնելու, երկրի պաշտպանությունն ամրապնդելու և սոցիալիզմի շինարարության համար։

Միութենական մեկ պետության մեջ սովետական հանրապետությունների կազմավորման ճանապարհին կարևոր փուլ էր Անդրկովկասյան ֆեդերացիայի ստեղծումը։ 1921 թ. ապրիլին Կովկասի կոմունիստ ընկերներին ուղղած նամակում Վ. Ի. Լենինն ընդգծում էր Կովկասի սովետական հանրապետությունների սերտ դաշինքի անհրաժեշտությունը, որը կստեղծեր ազգային խաղաղության չտեսնված օրինակ[8]։ Այս նամակն իր հետ Անդրկովկաս բերեց Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտ ու գինակից Ա. Մյասնիկյանը, որը Գ. Օրջոնիկիձեի, Ս. Կիրովի, Ն. Նարիմանովի, Մ. Օրախելաշվիլու և մյուս լենինյանների հետ խոշոր դեր կատարեց Անդրֆեդերացիայի և ՍՍՀՄ կազմավորման գործում։

1921 թ. նոյեմբերի 3-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն որոշում ընդունեց անդրկովկասյան հանրապետությունների ֆեդերացիա ստեղծելու մասին, որ լիովին բխում էր լենինյան ցուցումներից և մեծ համակրանքով ընդունվեց Աղրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի կուսակցական և անկուսակցական լայն զանգվածների կողմից։ 1921 թ. նոյեմբերի 28-ին Վ. Ի. Լենինը գրում է «Անդրկովկասյան հանրապետությունների ֆեդերացիա կազմելու վերաբերյալ առաջարկի նախագիծը»[9], որը հաջորդ օրն ընդունվում է ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյում։

Առանց սովետական կողմնորոշման, առանց Սովետական Ռուսաստանի եղբայրական օգնության Անդրկովկասի ժողովուրդները չէին կարող պաշտպանել իրենց անկախությունն ու ազգային շահերը։ «Սովետական օրիենտացիան,— ասում էր Ա. Մյասնիկյանը,— լավագույնն է բոլոր օրիենտացիաների մեջ։ Այդ մենք սովորեցինք կոմունիստների կուսակցության շնորհիվ»[10]։ Դա պարզ դարձավ սովետական իշխանության հենց առաջին ամիսներին, երբ իմպերիալիստները շարունակում էին իրենց դավթողական ոտնձգությունները Կովկասի նկատմամբ։ Գ. Օրջոնիկիձեն նշել է, որ 1921 թ. աշնանը, երբ

---

5 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 35, էջ 262։

6 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 35, էջ 262։

7 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 39, էջ 26։

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 402։

9 В. И. Ленин, ПСС, т. 44, с. 255.

10 Ալեքսանդր Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 419։

Թուրքիայի և սովետական հանրապետությունների միջև բանակցություններ էին վարվում, Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի ղեկավարները թուրքական ներկայացուցիչներին հասկացրին, որ եթե նրանք ուզում են վայելել մեր համակրանքը, ապա պետք է մեզ դիտեն որպես միասնական ամբողջություն, որպես միասնական եղբայրական հանրապետություն»։

1922 թ. մարտի 12-ին անդրկովկասյան սովետական հանրապետությունների միջև դաշնակցային պայմանագիր կնքելու նախագիծը հաստատվում է Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի կենտրոնական գործադիր կոմիտեների Թիֆլիսում տեղի ունեցած լիազոր կոնֆերանսում[11]։ Նույն տարվա դեկտեմբերի 13-ին Բաքվում տեղի ունեցած սովետների անդրկովկասյան I համագումարում որոշում է ընդունվում Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետություն (ԱՍՖՍՀ) կազմելու մասին[12]։ Ընդունվում է Անդրֆեդերացիայի սահմանադրությունը։

Հաշվի առնելով Վ. Ի. Լենինի ցուցումները՝ Կենտկոմի հանձնաժողովը վերամշակում է ՍՍՀՄ կազմավորման մասին բանաձևի նախագիծը, որը հաստատվում է ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումում՝ 1922 թ. հոկտեմբերի 6-ին[13]։ ՍՍՀՄ կազմավորման լենինյան առաջարկության օգտին արտահայտվեցին սովետական բոլոր ազգային հանրապետությունների աշխատավորները, սովետների համագումարները։ 1922 թ. դեկտեմբերի 30-ին Մոսկվայում կայացած ՍՍՀՄ սովետների I համագումարը հաստատեց Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման մասին դեկլարացիան և միութենական պայմանագիրը[14], ՍՍՀՄ Կենտգործկոմի նախագահներ ընտրվեցին միութենական բոլոր հանրապետություններից՝ Մ. Կալինինը, Գ. Պետրովսկին, Ա. Չերվյակովը, Ն. Նարիմանովը։ 1923 թ. հուլիսի 6-ին Կենտգործկոմի առաջին գումարման 2-րդ նստաշրջանում Վ. Ի. Լենինն ընտրվեց ՍՍՀՄ ԺողԿոմսովետի նախագահ։

1920-ական թվականներին, երբ կապիտալիստական աշխարհը բզկտվում էր ազգամիջյան սուր հակամարտությունների ճիրաններում, Սովետական Միությունը ստեղծվեց որպես ազգերի եղբայրության, բարեկամության և փոխադարձ օգնության միջնաբերդ։ Սոցիալիստական միութենական պետության ստեղծումը խոշոր առաջընթաց քայլ էր մարդկության սոցիալիստական պրակտիկայում։

Ընթանալով լենինյան ուղիով, կյանքի կոչելով լենինյան ազգային քաղաքականության սկզբունքները, կոմունիստական կուսակցությունն ամրապնդում ու զարգացնում է սովետական ժողովուրդների մեծ միասնությունը։ 1923 թ., Վ. Ի. Լենինի կենդանության օրոք, Սովետական Միության կազմում կային 33 ազգային պետություն և ազգային պետական կազմավորում, այդ թվում՝ 4 միութենական հանրապետություն և 16 ինքնավար մարզ, իսկ 1937 թ.՝ 51, այդ թվում՝ 11 միութենական հանրապետություն, 22 ինքնավար հանրապետություն, 9 ինքնավար մարզ և 9 ազգային օկրուգ։ Այժմ ՍՍՀՄ-ի կազմում մտնում են 53 ազգային պետություն և ազգային-պետական կազմավորում, այդ թվում՝ 15 միութենական և 20 ինքնավար հանրապետություն, 8 ինքնավար մարզ, 10 ինքնավար օկրուգ։ Այս կամ այն ազգային-պետական ձևեր ունեցող ազգությունների բնակչությունը կազմում է ՍՍՀՄ ամբողջ բնակչության 98%-ը։

Ազգային հարցի լուծման ուղղությամբ զարգացած սոցիալիստական հասարակության կարևորագույն արդյունքներից ու ցուցանիշներից է մեր երկրում մարդկանց պատմական նոր ընդհանրության՝ սովետական ժողովրդի

---

11 «Советское содружество народов. Сборник документов», М., 1972, с. 264—265.

12 Նույն տեղում, էջ 295—296։

13 Նույն տեղում, էջ 283—284։

14 Նույն տեղում, էջ 307—314։

կազմավորումն ու զարգացումը։ Սովետական ժողովուրդը մարդկանց սկզբունքորեն նոր, սոցիալ-քաղաքական և ինտերնացիոնալ ընդհանրություն է, որն անհամեմատ ավելի լայն է, քան մինչև այժմ հայտնի մարդկանց ընդհանրության պատմական բոլոր ձևերը, այդ թվում նաև ազգը։

Սովետական ժողովուրդը ոչ թե ազգային, այլ ինտերնացիոնալ ընդհանրություն է, որը միավորում է ավելի քան 100 ազգ, ժողովուրդ, ազգային ու էթնիկական խմբեր։ Այն առաջացել է ոչ թե սովետական բազմաթիվ ազգերի մի ազգի մեջ միաձուլումից, այլ ազգերի սովետական ընդհանուր գծերի առաջացման բազայի վրա։ Նրա ձևավորումն առանձին ազգերի միաձուլում, անհետացում չէ, այլ սոցիալիզմի զարգացման հիման վրա սովետական ազգերի ընդհանուր գծերի ձևավորում. որը նշանակում է ոչ թե ազգային տարբերությունների վերացում, այլ նրանց միավորում՝ ազգային տարբերությունների առկայության պայմաններում։ Սովետական ժողովրդին հատուկ են ազգի բազմաթիվ այնպիսի հատկանիշներ, ինչպես տնտեսական կյանքի, տարածքի, լեզվի, ազգային պատկանելիության ինքնագիտակցության, կուլտուրայի, կենցաղի և այլ ավանդույթների առանձնահատկություններ, այդ պատճառով էլ ճիշտ են այնպիսի հասկացությունները, ինչպիսիք են՝ «սովետական ազգային հպարտություն», «սովետական պետության ազգային շահեր» և այլն։ Չնայած գրան, սովետական ժողովուրդն ազգ չէ, այլ որակապես նոր, բազմազգ կազմավորում, մարդկանց ընդհանրության նոր, բարձրագույն ձև։ Դա սոցիալիզմից ծնված մարդկային համակեցության նոր ձև է, որի մասին նշել է Վ. Ի. Լենինը դեռևս հեղափոխությունից առաջ։ «Սոցիալիստական շարժումը,— գրել է Վ. Ի. Լենինը 1914 թ. նոյեմբերին, երբ մոլեգնում էր համաշխարհային պատերազմը,— ...ստեղծում է մարդկային համակեցության նոր, բարձրագույն ձևեր, երբ ամեն մի ազգության աշխատավոր մասսաների օրինական պահանջմունքներն ու առաջադիմական ձգտումներն առաջին անգամ կբավարարվեն ինտերնացիոնալ միասնության մեջ, այժմյան ազգային միջնորմները ոչնչացնելու պայմանով»[15]։

Մեր երկրում կառուցված զարգացած սոցիալիստական հասարակության մասին ՍՍՀՄ սահմանադրության մեջ ասված է. «Դա սոցիալիստական հասուն հասարակական հարաբերությունների հասարակություն է, որտեղ բոլոր դասակարգերի և սոցիալական խավերի մերձեցման, բոլոր ազգերի ու ազգությունների իրավաբանական ու փաստական հավասարության, նրանց եղբայրական համագործակցության հիման վրա կազմավորվել է մարդկանց պատմական նոր ընդհանրություն՝ սովետական ժողովուրդ»[16]։

Սովետական ժողովրդի բնորոշ գծերն են նվիրվածությունը կոմունիզմի գործին, սոցիալիստական հայրենասիրությունն ու ինտերնացիոնալիզմը, աշխատանքային ու հասարակական-քաղաքական ակտիվությունը, շահագործման և ամեն տեսակի ճնշման, ազգային ու ռասսայական նախապաշարումների նկատմամբ անհանդուրժողականությունը, դասակարգային համերաշխությունը բոլոր երկրների աշխատավորության հետ։

Սովետական ժողովրդի կազմավորման քաղաքական հիմքը միասնական բազմազգ սովետական պետությունն է։ Մարդկանց պատմական նոր ընդհանրության մեջ առաջատար դերը պատկանում է մեր երկրի բանվոր դասակարգին, իսկ ղեկավար դերը՝ Սովետական Միության կոմունիստական կուսակցությանը, որն իր գործունեության հենց սկզբից իր կազմով եղել է բազմազգ, իսկ էությամբ՝ խորապես ինտերնացիոնալ։

Սովետական ժողովուրդը, որպես մարդկանց կենդանի, շարժուն ընդհանրություն տնտեսական, սոցիալական, քաղաքական, կուլտուր-դաստիա-

---

15 Վ. Ի. Լենին, նույն, հ. 26, էջ 44—45։

16 «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության սահմանադրություն (հիմնական օրենք)», Երևան, 1978, էջ 4։

բական գործոնների ազդեցությամբ մշտապես զարգանում է, կատարելագործվում, ձեռք է բերում որակապես նոր գծեր։ ՍՍՀՄ-ում կառուցելով զարգացած սոցիալիստական հասարակություն, սովետական ժողովուրդը նոր պայմաններում մշտապես ինքնակատարելագործվում է որպես մարդկանց պատմական նոր ընդհանրություն։ Սովետական ժողովրդի ինտերնացիոնալ միասնության հիման վրա տեղի է ունենում սոցիալիստական ազգերի և նրանց մշակույթների ինտերնացիոնալացում, որն ընդգրկում է աշխատանքի, կենցաղի բոլոր կողմերը։ Ըստ որում, ազգայինում ինտերնացիոնալի ուժեղացումը ամենևին չի նշանակում, որ ազգայինը ղոհաբերվում է ինտերնացիոնալին, այլ արտահայտվում է նրանում, որ ազգայինն ինքը զարգանում, հարստանում է։ Վերանում է միայն ազգային սնապարծությունը, սահմանափակվածությունը, տեղայնությունը։ Իսկական ազգային հպարտությունը, հայրենասիրությունն ու ինտերնացիոնալիզմը վճռականորեն մերժում են ազգի շարգացման նկատմամբ կեղծ հոգատարությունը, որը սովորաբար թաքնվում է հայրենասիրության ներ. սահմանափակ ըմբռնմամբ։ Աշխատավորության՝ սովետական հայրենասիրության և սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակությամբ վերջնականապես հաղթահարվում են ամեն տեսակի շովինիստական և ազգայնական նախապաշարումները, ազգային նիհիլիզմը։ Ինտերնացիոնալիզմը դառնում է սովետական մարդկանց վարքագծի նորման։ «Մեր երկրում հարգվում են ազգային զգացմունքները, յուրաքանչյուր մարդու ազգային արժանապատվությունը,— նշված է կուսակցության XXVI համագումարին ՍՄԿԿ Կենտկոմի տված հաշվետու զեկուցման մեջ։— ՍՄԿԿ-ն պայքարել է և միշտ էլ վճռականորեն կպայքարի սոցիալիզմի բնույթին խորթ այնպիսի երևույթների դեմ, ինչպիսիք են շովինիզմը կամ նացիոնալիզմը, ամեն տեսակ նացիոնալիստական խեղաթյուրումների դեմ, լինի դա, ասենք, հակասեմիտիզմ, թե սիոնիզմ»[17]։ Վ. Ի. Լենինն ընդգծել է, որ լինել ինտերնացիոնալիստ, նշանակում է «մտածել ոչ միայն իր ազգի մասին, այլ նրանից ավելի բարձր դասել բոլորի շահերը»։ Ինտերնացիոնալիզմը սովետական ժողովուրդների մերձեցման ու գաղափարական-տեսական հիմքն է։ Դասակարգերի, մտավոր և ֆիզիկական աշխատանքի, քաղաքի և գյուղի միջև էական տարբերությունների հաղթահարումը տանում են դեպի սոցիալիստական ազգերի սոցիալական միատարության ուժեղացում։

Սովետական ժողովրդի ապրելակերպն ինտերնացիոնալ է։ Մեր երկրում ազգային հարցի լուծումը, աշխարհում առաջին բազմազգ սոցիալիստական պետության ստեղծումն ու զարգացումը սոցիալիստական ինտերնացիոնալիզմի գաղափարների, պատմական նոր ընդհանրություն կազմող բոլոր ազգերի ու ժողովուրդների եղբայրական համագործակցության և փոխադարձ օգնության կենդանի մարմնացումն է։ Այդ բնագավառում ՍՄԿԿ-ի փորձը մեծ նշանակություն ունի սոցիալիստական համագործակցության ձևավորման գործում։ Այն գաղափարական, հեղափոխականացնող հսկայական նշանակություն ունի կապիտալիստական և զարգացող երկրների համար։ Ահա թե ինչու ինպերիալիզմի գաղափարախոսներն ու քաղաքագետները դիմում են ամեն տեսակի կեղծիքի՝ խեղաթյուրելու, ցույց տալու, որ իբր սովետական երկրում չկա ժողովուրդների, ազգերի իրավահավասարություն, հերյուրանքներ են հորինում, որ իբր մեր երկրում «ռուսականացման» պրոցես է ընթանում, որ վերանում է ազգերի զարգացումը։ Այդ նպատակին են ծառայում ՍՍՀՄ-ն «ուսումնասիրող» բազմաթիվ կենտրոններ, «մասնագետներ»։ Եթե 1850—1950 թթ.՝ 100 տարում, «Ռուսաստանի մասնագետները» միայն ԱՄՆ-ում պաշտպանել են 250 դոկտորական դիսերտացիա, ապա միայն 1950—1963 թթ.՝ 1000։ Կոլումբիայի (Նյու-Յորք) համալսարանում ՍՍՀՄ ուսումնասիրությամբ զբաղվում են 13 ամբիոն և ինստիտուտ։ Հատուկ կենտ-

---

17 «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», Երևան, 1981, էջ 92։

րոններ կան, որոնք «ուսումնասիրում են» սովետական առանձին հանրապետություններում ազգային հարցի դրվածքը։ Նրանք փորձում են «ապացուցել», որ իբր ժողովուրդների միջև հակամարտությունները, շովինիզմն ու ազգայնականությունը հավասարապես բնորոշ են ինչպես կապիտալիզմին, այնպես էլ սոցիալիզմին։ Բուրժուական կեղծարարները հավասարության նշան են դնում ազգերի մերձեցման սովետական և ցարիզմի ռուսականացման քաղաքականությունների միջև։

Կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության, ռեալ սոցիալիզմի պատմական նվաճումները ՍՍՀՄ-ում ազգային հարցի լուծման գործում լիովին հերքում են բուրժուական կեղծարարների հերյուրանքները։ Սովետական և սոցիալիստական մյուս երկրների հեղինակների բազմաթիվ աշխատություններում վճռականորեն մերկացվում են նման «փորձերը», հակակոմունիստների կեղծիքները ՍՄԿԿ-ի ազգային քաղաքականության բնագավառում։

Սովետական ժողովուրդները սիրով ու երախտագիտությամբ են նշում, որ միասնական պետության ստեղծման գործում վճռական դեր խաղաց ՌՍՖՍՀ-ն, որի շուրջը կամավոր հիմունքներով համախմբվեցին սովետական բոլոր հանրապետությունները։ Ռուսաց լեզուն պատմական և կենսական անհրաժեշտությամբ դարձավ ազգամիջյան հաղորդակցության հզոր միջոց, որին այժմ տիրապետում է երկրի բնակչության 82%-ը։ Ռուս մեծ ժողովրդի լեզուն, Վ. Ի. Լենինի լեզուն դարձել է սովետական ժողովրդի սոցիալ-քաղաքական և գաղափարական միասնության ամրապնդման, ազգային մշակույթների զարգացման ու փոխհարստացման կարևոր գործոն, որը մեր բոլոր ժողովուրդների համար լայն ճանապարհ է բացել դեպի համաշխարհային քաղաքակրթության հոգևոր հարստությունները։

Գնալով ամրապնդվում է սովետական ազգերի միասնությունը, զարգանում են ազգային հարաբերությունները։ Ինչպես նշվեց ՍՄԿԿ XXVI համագումարում, առաջընթաց այդ պրոցեսում կան և ծնվում են նոր պրոբլեմներ, որոնց լուծումը պահանջում է կուսակցության զգայուն վերաբերմունքը նաև ազգային հարաբերությունների ոլորտում։

Սովետական Միությունը համաշխարհային պատմության ընթացքի վրա աճող ազդեցություն ունի իր գոյության փաստով, նոր տիպի սոցիալական ու ազգամիջյան հարաբերությունների ռեալ պրակտիկայով, բարդ պրոբլեմների լուծման օրինակի ուժով, որոնք անհաղթահարելի են կապիտալիստական հարաբերությունների պայմաններում։

Արդի ժամանակաշրջանում լենինյան ազգային քաղաքականության տեսության և պրակտիկայի ստեղծագործական զարգացման մեջ խոշոր ներդրում կատարեց ՍՄԿԿ XXVI համագումարը։ Լ. Ի. Բրեժնևը համագումարում նշեց, որ սովետական ժողովուրդների ընտանիքը դարձել է ավելի համախմբված, ավելի հզոր, քան երբևէ։ Սովետական իշխանության տարիներին Ռուսաստանի նախկին ազգային ծայրամասերը հասան նրա կենտրոնի զարգացման մակարդակին։ 1913—1981 թթ. արդյունաբերական արտադրության ընդհանուր ծավալն ամբողջ երկրում աճեց 157 անգամ, մինչդեռ Բելոռուսիայում՝ 221, Ղազախստանում՝ 238, Մոլդավիայում՝ 281, Կիրգիզիայում՝ 344, Հայաստանում՝ 362 անգամ և այլն։ ՍՍՀՄ ազգային շինարարության փորձն ակնառու ցույց է տալիս սոցիալիզմի մեծ առավելությունը կապիտալիզմի հանդեպ, պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարների կենսահաստատ ուժը։

Զարգացած սոցիալիզմի կառուցմամբ ավելի ու ավելի հզոր է դառնում ազատ և իրավահավասար հանրապետությունների ինտերնացիոնալ ընկերակցությունը։ Մեր երկրի ժողովուրդների ամրապնդող պետական միասնության մեջ ավելի լրիվ են բացահայտվում նրանց ստեղծարար ուժերը։ 10-րդ հնգամյակի տարիներին արդյունաբերական արտադրության ծավալը, օրինակ, Բելոռուսիայում մեծացել է 42, Ադրբեջանում՝ 47, Ուզբեկստանում՝ 27, Վրաստանում՝ 41, Տաջիկստանում՝ 30, Հայաստանում՝ 46, Էստոնիայում

24%-ով։ Սովետական յուրաքանչյուր հանրապետությունում մեծ աշխատանք է կատարվում գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ։ 11-րդ հնգամյակի առաջին տարվա արդյունքները վկայում են, որ սովետների երկիրը դեպի իր պանծալի հոբելյանն է գնում վստահ քայլերով։

Կոմունիստական կուսակցությունն ուշադրությամբ հետևում է ինչպես ընդհանուր միութենական օրգանիզմի, այնպես էլ նրա բաղկացուցիչ մասերի զարգացման միտումներին, իրականացնում է բոլոր ազգերի և ազգությունների փաստացի հավասարություն ապահովող քաղաքականություն։ Այդ քաղաքականությունն արտացոլվել է 11-րդ հնգամյակի պլաններում։ Դրա առանձնահատկություններին համապատասխան որոշվել են հանրապետությունների տնտեսական զարգացման մասշտաբները և մակարդակների հետագա համահարթման տեմպերը։ Այսպես, եթե արդյունաբերական արտադրանքի թողարկումը ՍՍՀՄ-ում ամբողջությամբ վերցրած մեծանալու է 26%-ով, ապա մի շարք հանրապետությունների համար այդ աճն ավելի բարձր է լինելու. Բելոռուսիայում այն կազմելու է 28, Ադրբեջանում՝ 30, Ուզբեկստանում՝ 30, Հայաստանում՝ 31, Վրաստանում 31%։ Սովետական Միության ժողովուրդների միասնական ընտանիքում վերածնված հայ ժողովուրդն իր բոլոր հաջողություններով և նվաճումներով պարտական է լենինյան գաղափարների կենարար ուժին, կոմունիստական կուսակցության իմաստուն ազգային քաղաքականությանը, մեր երկրի բոլոր ժողովուրդների բարեկամությանն ու եղբայրությանը։ «Սովետական Հայաստանի պատմական փորձը,— 1970 թ. նոյեմբերի 29-ին Երևանում արտասանած իր ճառում ընդգծեց Լ. Ի. Բրեժնևը,— կրկին ու կրկին համոզում է, որ ազգի իսկական ծաղկումը ձեռք է բերվում ոչ թե ազգային պարփակման ու մեկուսացման ուղիներով, այլ սոցիալիստական ազգերի ու ժողովուրդների եղբայրական ընտանիքում փոխադարձաբար միմյանց հարստացնող ներդաշնակ զարգացման շնորհիվ»[18]։

Դարերի ընթացքում օտար նվաճողների կողմից հալածված հայության հարկադրական տարագնացությունը սովետական իշխանության տարիներին, լենինյան ազգային քաղաքականության հետևողական կենսագործման հետևանքով վերածվեց մասսայական հայրենադարձության դեպի հայ ժողովրդի միակ հայրենիքը՝ Սովետական Հայաստան, որտեղ նրանք ահա 60 տարի է ինչ ՍՍՀՄ ժողովուրդների միասնական ընտանիքում լծվել են սոցիալիստական շինարարության մեծ գործին։ Ականավոր գրող և հասարակական գործիչ Վիլյամ Սարոյանը, որին հետմահու շնորհվել է «Խաղաղության և մայր հայրենիքի հետ կապերի օգտին ակտիվ գործունեության համար» ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության մրցանակը, գրել է. «Եթե չլիներ Սովետական Հայաստանը, մենք դժբախտ կլինեինք, մեզ համար մեծ բախտ է, որ մեզ զորավիգ է ռուս ժողովուրդը, մենք չենք կարող գոյատևել առանց զորավոր պաշտպանության, իսկ դա Սովետական Միությունն է»։

Սոցիալիզմի առաջին հայրենիքը՝ ՍՍՀՄ-ը, բազմակողմանի ազդեցություն է գործում կոմունիստական շինարարության ողջ պրոցեսի վրա, իսկ նրա միջոցով՝ սոցիալական առաջադիմության՝ միջազգային մասշտաբով։ Կապիտալիզմի նկատմամբ սոցիալիզմի հաղթանակի անհրաժեշտ նախադրյալն ինչպես առանձին երկրների, այնպես էլ սոցիալիզմի համաշխարհային սիստեմի և կոմունիզմ կառուցող ազգերի ու ժողովուրդների աշխատավորության ջանքերի ինտերնացիոնալիստական համախմբվածությունն է։ Սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցումը ոչ միայն ազգային, այլև ինտերնացիոնալ խնդիր է։ «Չկա ու չի կարող լինել դեպի սոցիալիզմ տանող ճանապարհ՝ առանց հաշվի առնելու այն ընդհանուր օրինաչափությունները, որոնք հայտնագործվել են մարքսիզմ-լենինիզմի կողմից, հաստատվել ՍՍՀՄ-ի, ռեալ սոցիալիզմի երկրների փորձով, հեղափոխական պայքարի և սոցիա-

18 Լ. Ի. Բրեժնև, Սովետական Հայաստանի 50 տարին, Երևան, 1970, էջ 25—26։

լիստական շինարարության ինտերնացիոնալ պրակտիկայով, ինչպես նաև չի կարող լինել այդ ուղիով հաջող առաջընթաց՝ առանց բազմակողմանիորեն հաշվի առնելու յուրաքանչյուր երկրի ազգային առանձնահատկությունները»[19]։

Կոմունիստական շինարարության բնագավառում սովետական ժողովրդի հաջողությունները հեղափոխական ողջ պրոցեսի, ամբողջ մարդկության բախտի վրա ռեալ սոցիալիզմի հեղափոխականացնող ազդեցության անսպառ աղբյուր են։ Դա բազմիցս նշել են աշխարհի բոլոր ժողովուրդների առաջադեմ ներկայացուցիչները, կոմունիստական, բանվորական, ազգային-ազատագրական շարժումների ղեկավարները։ ՍՄԿԿ XXVI համագումարում Կուբայի կոմունիստական կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար, Կուբայի Հանրապետության Պետական խորհրդի և Մինիստրների խորհրդի նախագահ Ֆիդել Կաստրո Ռուսը հայտարարեց. «Նոր աշխարհը, որում խորտակվեցին հին գաղութային կայսրությունները, այն աշխարհը, ուր ամրապնդվում և տարածվում է սոցիալիզմը, այն աշխարհը, որը դրեց ժողովուրդների ազատության և անկախության՝ պատմության մեջ չտեսնված դարաշրջանի սկիզբը... հնարավոր դարձավ շնորհիվ Սովետական Միության գոյության, նրա ամուր և սկզբունքային մարքսիստական-լենինյան ինտերնացիոնալիստական քաղաքականության և վերջին հաշվով շնորհիվ նրա հզորության»[20]։ Վիետնամի կոմունիստական կուսակցության Կենտկոմի գլխավոր քարտուղար Լե Զուանը, ողջունելով ՍՄԿԿ XXVI համագումարը, ասաց. «Կոմունիզմի կառուցման ճանապարհին ՍՍՀՄ-ի յուրաքանչյուր հաղթանակ ազատասեր ժողովուրդների հպարտության և հույսի աղբյուր է»[21]։ Ընդգծելով Սովետական Միության պատմական հաջողությունները կոմունիստական շինարարության բնագավառում, Չեխոսլովակիայի կոմունիստական կուսակցության Կենտկոմի գլխավոր քարտուղար, Չեխոսլովակիայի Սոցիալիստական Հանրապետության պրեզիդենտ Գուստավ Հուսակը ՍՄԿԿ XXVI համագումարում հայտարարեց. «Ամբողջ աշխարհում խաղաղության գործի համար անգնահատելի նշանակություն ունի այն փաստը, որ շնորհիվ առաջին սոցիալիստական պետության առաջացման Սովետական Միության վիթխարի տնտեսական ու ռազմական կարողությունը, միջազգային մեծ հեղինակությունը դարձան ժողովուրդների խաղաղության, հանգիստ կյանքի, ազատության ու անկախության երաշխիքը։ Նրանք դարձան այն վճռական խոչընդոտը, որին բախվելով ջախջախվում են իմպերիալիզմի ագրեսիվ պլանները»[22]։

ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակի նշումը կոչված է նոր հզոր ազդակ տալու կուսակցության ու ժողովրդի միասնության հետագա ամրապնդմանը, երկրի բոլոր ազգերի և ազգությունների է՛լ ավելի սերտ համախմբմանը, մասսաների քաղաքական, ստեղծագործական ակտիվության վերելքին։

---

19 «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման 60-րդ տարեդարձը։ ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը», էջ 22։

20 «XXVI съезд Коммунистической партии Советского Союза. Стенографический отчет», I, М., 1981, с. 150—151.

21 Նույն տեղում, էջ 155։

22 Նույն տեղում, էջ 200։